



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«23» հունիսի 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N°33-Ա

**«ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
«AREAL» ԳԾԱՅԻՆ ԱՐԱԳԱՑՈՒՑՉԻ ՎՐԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2017 թ. ապրիլի 13-ի N 379-Ա/2 հրամանի 3-րդ կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2017 թ. մայիսի 19-ի N 561-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից ֆինանսավորման երաշխավորված թեմաների ցանկը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռուզան Ասատրյան)՝
 - 1) մրցույթի արդյունքների մասին տեղեկացնել թեմաների ղեկավարներին,
 - 2) կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրերի կնքումը:
3. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2017 թ. հուլիսի 1-ից:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ցանկ
«ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների

N/N	թեմայի ծածկագիր	թեմայի ղեկավար	Թեմայի վերնագիր	կազմակերպություն
1	17A-1F008	Բաբայան Նելլի Սամվելի	Մարդու քաղցկեղային բջիջներում գերարագ էլեկտրոնային ճառագայթմամբ մոլեկուլագենետիկական և էպիգենետիկական փոփոխությունների մակաձման արդյունավետության գնահատում	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	17A-1C004	Իվանյան Միքայել Իվանի	Արագացնող և ճառագայթող նոր միամոդալ կառուցվածքների փորձարարական ուսումնասիրություն	ՀՀ ԿԳՆ ԳՊԿ «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
3	17A-1C002	Հարությունյան Վաչագան Վիկտորի	Գերարագ էլեկտրոնային փնջով հարուցված անհավասարակշիռ պրոցեսների ուսումնասիրություն կիսահաղորդիչներում	ՀՀ ԿԳՆ «Ա.Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
4	17A-1F009	Զավուշյան Անդրանիկ Ստեփանի	Ցածր էներգիայով էլեկտրոնային փնջով ճառագայթման նկատմամբ ադապատիվ պատասխանը կրծողների մոտ	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
5	17A-1F010	Փեփոյան Աստղիկ Զավենի	էլեկտրոնային փնջի ճառագայթման ազդեցությունը պրոբիոտիկ լակտոբացիլների կենսաֆիլմ ձևավորման ընդունակության և բջջային մակերևութային հիդրոֆոբության վրա	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ